ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Տեքսուորլդ ՍՊԸ	Կիսավերարկուն սև կիսաբամբակյա անջրանցիկ կտորից է՝ խտությունը ոչ պակաս 215 գրամ մ2, թույլատրելի շեղումը համաձայն ԳՈՍՏ-ի: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, ծալովի օձիքից՝ հանվող սև մորթուց, հետնամասում՝ կայծակաճարմանդով փակվող ներկարված գրպանից (որի մեջ տեղադրվում է անձրևանոցը (թիկնոցը)), առջևի ներքևի փեշերին՝ վրադիր և միջնադիր գրպաններից, կրծքամասում թաքնված՝ ներկարված գրպաններից: Կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով: Կիսավերարկուի առաջամասը, թիկունքը և թևերն ամբողջությամբ մշակվում են սինթեպոնով, որը մգդակված է աստառի հետ շեղանկյուն (փախլավաձև) հյուսքով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում՝ ծոցագրպան: Թիկունքի եզրակարի վերևի մասում կարվում է «ՔԿԾ» նշագրմամբ թիկունքանշան: Կրծքամասում՝ ձախ հատվածի վերևի մասում, ամրացվում է «ՔԿԾ» բառը, իսկ աջ մասում կարվում է կպչունակ՝ ծառայողի արյան կարգը նշելու համար: Ուսադիրների շրջանում՝ կպչունակով ամրակներ և նույն կտորից ուսադիրներ: Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը Վաճառողի կողմից կարվում է կիսավերարկուի ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
3		